եւս։ Պատմութեան այս ամենամեծ մէկ դի-
պուածին ատեն (Խաչակրաց Երուսաղեմի
տիրելուն), Եգիպտոսի վզուրկ էր վզբր-
կաց զոռոզագոյնն՝ Շահնշահ, միանգամայն
և զօրապետ և ամենապետ. հարկ էր՝ որ թէ
ոչ անձամբ՝ երեսփոխանով մի ելնէր անոնց
դէմ. և ահա այս նոր դիւցազանց գովասա-
նից դասապետն՝ Դասսոյ, (որոյ՝ յանկարծ
մահուանէ զրկած քերդողայաղթ պսակն՝
այս տարի (1895), փառաւորապէս տրուե-
ցաւ ի յիշատակի իր 300ամեայ յոբելի-
նին), իր դիւցազին (Կոփրեատոսի) արժա-
նաւոր դիմամարտ հաներ է զՀայն Լիմիրեն.
որ՝ յետ ամենայն ջանից և քաջութեանց՝
խոցելով զմեծն այն Բուլլիոն (Կոփրեատ,
il maggior Buglione), ինքնին կանչէ,
«Ահա կու գամ քու ձեռքէդ մեռնելու.

Ecco, per le tue mani a morir vegno.

ինչ որ պատմիչ մեր (Մ. Խորեն.) փափա-
գէր իր հին դիւցազին (Զարմայրի) համար.
«Կամիմ՝ յԱքիլլեայ, և մի՛ յայլ ումեքէ
»ի քաջացն »։... Աքիլլէս և Կոփրեատ.
Զարմայր և Լիմիրէն. Տրոյա և Երուսա-
ղէմ. Հոմեր և Դասսոյ! Ի՜նչ զարմանալի
զուգաւորութիւնք պատմութեան և երեւա-
կայութեան!